Հրատարակութիւն «Վանոյ երկամեայ հանգիսի

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

377

ՇԱՐԺԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ



ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1902

Հրատարակութիւն «Լուսոյ» երկամեայ հանդիսի

ՏՏՕ. 34 (47. 925) (09)
Կ-

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՄՏԱՐԿՎԱԾ Է 1961 Թ.

ՇԱՐԺԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

22601

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Թոմբինեանցի
1902

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Мая 1902 г.

A III/1055

ՁԸՐԺԻ ՏՐԻԵԳՐՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Ա.

Աղէտներ կան, որ իրանք մարդիկ են պատրաստում։ Այդպէս են, օրինակ, ելուզակութիւնները, բռնի գաղթականութիւնները, կոտորածները, ներքին պատերազմները և այլ ընտանեկան պէսպէս երկպառակութիւններ։ Թէ որքան անմեղ զոհեր են եղել այդպիսի հարուածների ժամանակ, որքան չէն ու ծաղկեալ տաններ, քաղաքներ, մինչև անգամ ամբողջ գաւառներ ամայութեան են դատապարտուել նոցա երեսից, քանի՞ քանի՞ անգամ անբերութիւն, սով, ժանտախտ և այլն լաջորդել են այդ աղէտներին և առաւել ևս թշուառացուցել մարդուս վիճակն աշխարհիս երեսին, տեղը չէ մի առ մի թուել։ Պատմութիւնն, անշուշտ, բոլորովին այլ կերպարանք կունենար, եթէ մարդուս կիրքն այդպիսի ոգեղ, աւերիչ արտայայտութիւն չունենար անցեալում։ Մխիթարականն այն է, որ ժամանակի ընթացքում բարքերն անհամեմատ աւելի մեղմացան և ազնուացան, և այնպիսի աղէտների պատահումը բարերաղդաբար հեռու է քաղաքակրթեալ աշխարհներից։

Նոյնը չէ կարելի ասել այն աղէտների մասին, որոնք բնութեան երևոյթների արդիւնք են։ Մարդս միանգամայն անզօր և անընդունակ է, մաքառելու և արգելելու նոցա պատահումը։ Եւ լիրաւի, ինչ է իսկապէս մարդուս զօրութիւնն այնպիսի ահաւոր և անբռնաբարելի հարուածների դէմ, ինչպէս են հրաբուղխը, չարժը, ջրհեղեղը, կարկուտը, կայծակը, երաշտը, ժորախն և այլն։ Եւ կալ արդեօք մեր հայրերի տարեգրութեան տխուր էջերի մէջ մի տեղ, ուր արձանագրուած չլինի նոցա լիչատակութիւնը։ Մարդկային բարքերի որպիսութիւնից ամենևին կախումն չունի այդպիսի աղէտների կրկնութիւնը կամ դադարումը։ Քաղաքակրթութիւնը, որքան

և զարգացած լինի, անընդունակ է նոցա առաջն առնելու։ Արդի գիտութեան միջոցով մարդիկ ընդունակ են բացատրելու բնութեան երևոյթներն և ըմբռնելու նոցա իսկական պատճառը, բայց թէ նոքա կարող են հասնել այնպիսի զարգացման, որ զեկավարեն և ուղղութիւն տան նոցա, այդ շատ կասկածելի է։ Չէ որ ամէն մի փոփոխութիւն, որ տեղի է ունենում տիեզերքի մէջ, ունի իւր անկախ պատճառը, որի վերայ մարդս ոչ մի ազդեցութիւն չունի։ Ինչպէս որ բնութեան մէջ ցրտի ժամանակ ջուրը սառչում է, կամ տաքի ժամանակ՝ չոգիանում, և մարդ անկարող է արգելել այդ երկու երևոյթները, կամ փոխել նոցա բնութիւնը, նմանապէս էլ երկրագնդի կեանքի մէջ տեղի են ունենում բնական այնպիսի փոփոխութիւններ, որոնք անհրաժեշտ են և որոնց հանդէպ գալուն ոչ մի մարդկային զորութիւն արգելք լինել կարող չէ։ Այս հանգամանքն է, անշուշտ, պատճառ, որ մարդիկ երբեմն բնութեան պարգևած աղէտներն համարում էին պատուհասաստ բարկութեանս նշան կամ անեզոյ պատիժ։

Բնութեան հարուածների ազդեցութիւնն հաւասարապէս տարածւում է ամէնի վերայ։ Խորութիւն չկայ, թէ մարդս ապնիւ ու մեղմ բարքի տէր է թէ ընդհակառակը, կամ թէ մարդս աշխարհի զորաւորներից է, թէ աղքատ և անօգնական մէկը։ Հարուածներն անակնկալ հասնում սպառում են մեր վատակներն և խլում են մեր կեանքի և գոյութեան ապահովութիւնը. ցուրտը միանգամից առնում է մեր ալդինները, ժանդն ապականում է մեր արտերը, թրթուրը, մորախը, մուկը չեն խնայում, տարածւում ոչնչացնում են մեր քրտնքի պտուղները, նոցանից ոչ պակաս ծանր վնասներ են տալիս մեզ հեղեղը, կարկուտն ու երաշտը։ Ինչ են արդեօք մեր գործ դրած միջոցներն այն ահագին կորուստների դէմ, որ ունենում ենք նոցա երեսից. չէ որ շատ անգամ այդպիսի հարուածների հետևանքը լինում է թանգութիւն, սով, ժանտախտ և ակամայ գաղթականութիւն. ինչով կարող ենք մենք առնել դոցա առաջն, երբ ակներև է մեր անզօրութիւնը նոյն իսկ այդ պատուհասներից որ և է մէկի առջև, թող թէ նոցա միահաղոյն բռնանալու միջոցին։ Անք ճգնում տքնում ենք միայն թուլացնելու հարուածների դառն ազդեցութիւնը մի որ և է մեղմացուցիչ գործով, ինչպէս օրինակ կարկուտն արգելելու կամ երաշտի դէմ անձրև բերելու մեքենական փոր-

ձերը, կամ կարկից ապահովագրելու ընկերական պայմանները, մարախը կոտորել տալու ջանքերը, թրթուրի սպառման միջոցներն և այլն. սակայն բուն աղէտի նկատմամբ այդպիսի գործերն այնքան նշանակութիւն ունին, որքան հասարակաց կարեկցութիւնն, երբ ամեն ոք իւր ձեռնասութեան չափ չտապում է հարուածեալների կրած դրկանքի տեղը լցնել իւր կամաւոր տուրքերով։ Նեղութեան ժամին, ի հարկէ, չատ թանդ արժէ այդ մարդասիրական գործունէութիւնը, քանի որ վնասը նիւթականին է վերաբերում և մարդկային զոհեր չկան։ Իսկ եթէ աղէտը վերջանում է անթիւ զոհերով, եթէ մահը վայրկենական արագութեամբ անակնկալ լարձակում է և իւր անողոքելի ճիրանները տարածում է բազմամարդ բնակավայրերի վերայ, ինչ կարող ենք անել մենք, ինչ կարող է անել զարգացած գիտութիւնն ու հանճարը։ Այստեղ անսն կատարելապէս փալլում է մեր անզօրութիւնը։ Մեր գիտակցութեան մէջ միւում բնեռւում է այդ սարսափն առաւելապէս սովի, ժանտախտի և չարժի ժամանակ։ Թէ այդ աղէտներից որն է աւելի չատ զոհեր տանում, ապաքաղաքարար, ճշդել անհնարին է։ գիտենք որ սովին հացով, ժանտախտին առողջապահական միջոցներով և բժշկներով դիմադրել կարելի է, և փրկել մարդկային կեանքը, իսկ չարժին, որ անակնկալ մի հարուած է, գրեթէ ակնթարթի տեղողութեամբ, ոչ մի հնար չունինք կեանք ազատելու։ և այս իսկ է չարժի ամենամանգաւոր լատկութիւնը։ Եթէ աշխարհը չարժի երեսից անդառնալի կորուստներ ունեցել է, այդ ոչ թէ քարուքանդ եղած շէնքերն են, որոնք կարող են վերստին կանգնել առաւել ևս չքեղ և հաստատիւն քան լառաջ էին, ոչ թէ կորած ոչնչացած՝ գանձերն ու ստացուածքներն են, որոնք աշխատանքի ճանապարհով վերստին լիս են դալիս, այլ մարդկային զոհերն են, որոնք լանկարծակի առանց խորութեան հատակի, սեռի և ասոիճանի մի քանի վայրկենում իրենց դերեզմանը գտնում են անսպասելի և ահաբեկող աւերման տակ։ Լինում են, ի հարկէ, և աղտուղներ, սակայն ոչ մարդիկ, ոչ էլ գիտութիւնն ամենեին նշանակութիւն չունին այդ փրկութեան գործի մէջ, այլ միմիայն Նախախնամութիւնը։ 79 թուին օգոստոսի 24-ին Վեսուվի հրաբուղխն իւր մոխրի և լաւայի տակ թաղեց Պոմպէյի քաղաքը, որ մի քանի տարի առաջ արդէն վնասուել էր երկրաշարժից. դարեր անցան,

1689 թուին պեղումների միջոցով լայտնուեցաւ այդ քաղաքը, որի մեծագոյն մասն այսօր արդէն բացուած է և գրեթէ փերկուած. մենք կարող ենք այժմ տեսնել նորա բոլոր շէնքերը, հրապարակները, փողոցները, գործատներն ու գործիքները, կահկարասիքն և այլն այնպէս ինչպէս այդ ամենն եղել է աղէտի պատահման վայրկենին. սակայն ուր են նոցա տէրերն ու վայելողները. չկայ այնտեղ զէթ նշոյլն այն կենդանութեան, որով կանգուն էր այդ քաղաքն աղէտից յառաջ. անագորոյն հարուածը չխնայեց մինչև անգամ երէցն Պլինիոսի կեանքին, որ ժամանակի հղօրներից և գիտուններից մէկն էր։ Այսպէս՝ դարերի ընթացքում կործանուել են քաղաքներ և աւաններ և զոհ են եղել շարժին հազարաւոր և բիւրաւոր մարդիկ առանց որ և է ցաւի, հիւանդութեան կամ համաձարակի հանդիպած լինելու այնպէս, ինչպէս մի կենդանի անտառ լանկարծակի զոհ է լինում ծախիչ կրակին կամ մի բուրաւէտ փարթամ ծաղկոց մի ակնթարթի մէջ խամրում թառամում չորանում է լանկարծակի խորչակից։

Թէ զոհերի թիւը որպիսի մեծ չափերի է հասնում շարժի ժամանակ, բաւական է լիշել մեր տարեգրութեան հետեւեալ տեղեկութիւնները.

735 թուին Վայոց Ձորում ողջողջ գետնի տակ անցան տասն հազար մարդ։ Դուին քաղաքում 854 թուին մի գիշերուայ մէջ մեռան 12 հազար մարդ, իսկ 869 թուին, երբ շարժը տեւեց մի տարի, զոհ եղան 120 հազար մարդ։ Երզնկայ քաղաքում 1268 թուին մեռան 15 հազար, 1458-ին 32 հազար, 1482-ին 30 հազար, 1584-ին 15 հազար մարդ, և այլն։

Եթէ մինչև անգամ մտածենք, որ այս թուերն անճիշդ են, որովհետև հին ժամանակներն առ հասարակ դժուարին էր վիճակագրութիւն կազմել, այն էլ շարժի նման աղէտի միջոցին, այնուամենայնիւ նոքա մեծաւոր դաղափար տալիս են շարժի տարած զոհերի մասին։ Չենք կարող մտածել սակայն, որ այդ թուերը չատ չափազանցորէն լիշուած լինին, քանի որ գիտենք թէ 1868 թուին Հարաւային Ամերիկայում մեռան շարժի ժամանակ 54 հազար մարդ։ Եւ միթէ հարկ կայ ճիշդ թուեր որոնելու. տարեգրութիւնն այնքան պերճախօս փաստեր է տալիս շարժի պատճառած անփոխարինելի կորուստների մասին, որ բաւական է միայն լիշել մի քանի

բազմամարդ վաճառաշահ մեծ քաղաքների մէջ պատահած շարժի լաճախութիւնը, որպէս զի համոզուինք, թէ այն մութ դարերում աւելի ընդարձակ կարող էր լինել մեռածների թիւը, քան մենք մտածել կարող ենք մեզ հասած հատուկտոր տեղեկութիւններով. չէ որ լիշատակարանների մէջ ընդհանրապէս աւելի շատ հանդիպում ենք այնպիսիներին, որոնք ամենեին չեն էլ լիշում մեռածների թուի մասին, մինչդեռ արհաւիրքի լանկարծական պատահումն, այն էլ երբեմն գիշեր ժամանակ, մեզ ենթադրել է տալիս կոտորածի անհրաժեշտ չափը. Այսպէս օրինակ շարժին լաճախակի ենթակայ են եղել հետևեալ մեծ քաղաքներն իրենց գաւառներով.

Դուին 854, 858, 869 և 893 թուերին.

Երզնկայ 1011, 1045, 1165, 1236, 1251, 1268, 1281, 1287—1289, 1458, 1482 և 1584 թուերին.

Վան 1276, 1646, 1648, 1701, 1704, 1715 և 1791 թուերին.

Արզրում 1659, 1791, 1843, 1850—1852, 1860 - 1861, 1901—1902 թուերին.

Թաւրէզ 1641, 1646, 1791, 1859 և 1872 թուերին.

Շամախի 1806, 1828, 1847—1848, 1859, 1869, 1872 և 1902 թուերին.

Այս թուանշանները ցոյց են տալիս թէ շարժի երևոյթը մեր երկրում, կարծես, իւր յատուկ ժամանակագրութեան հոսանքն է ունեցել. թէ աւելի հին դարերում ուր և երբ է տեղի ունեցել այդ երևոյթը, մասամբ կրտեսնուի տարեգրութեան լաջորդական թուերով. Թ. դարում շարժի նկարագրութիւններն առաւելապէս Դուինի և նորա շրջականների վերաբերեալ են կեդրոնացած, որից ի հարկէ չենք կարող եզրակացնել, թէ այդ շրջանակից դուրս միևնոյն ժամանակում շարժեր չեն եղել, այնուհետև ԺԱ դարից մինչև ԺԷ դարը շարժի հարուածներին ենթակայ է եղել Երզնկա քաղաքն և իւր գաւառը, ԺԹ—ԺԸ դարը նոյն ազէտին ենթարկուել է Վան քաղաքն իւր շրջականներով, ապա ԺԷ—Ի դար Արզրումը, և ԺԹ—Ի դար Շամախին. Շատ բնական է, որ այդ քաղաքների և գաւառների երկրաբանական պատճառներն են լառաջ բերել շարժ և այդ կողմից շատ հետաքրքրական է ուսումնասիրել այն փլատակները, որոնք շարժի տեղերում պատկերացնում են մեր երկրի ներքին կազմութեան այս կամ այն լատկութիւնը.

Բ

Շարժի ժամանակի և վնասների մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բաւական է լիշել մեր քաղուածների համառօտ բովանդակութիւնը, որ է այս.

602—603 թ. Տարօնում շարժ եղաւ և փլաւ ս. Կարապետի վանքը։

735 յուլիսի 21-ին Վայոց Ձորում սաստիկ շարժ եղաւ, որ տեւեց քառասուն օր. մօտ տասն հազար մարդ ողջ-ողջ դետնի տակ անցան։

800—802 թ. սաստիկ շարժ եղաւ. Կողոտու լեռներն իրար դիպան. սարի մէկը փուլ եկաւ, ընկաւ Եփրատի մէջ, որի հոսանքը մի օր արգելուեցաւ. շատ լեռներ պատռուեցան. շատ տեղ աղբիւրներ բացուեցան, և շատերն էլ խափանուեցան։

854 թ. մեծ պասին շարժ եղաւ Դուինում, մի գիշերուայ մէջ տասներկու հազար մարդ մեռան։

858 թ. սաստիկ շարժ եղաւ Դուինում. տներ, ապարանքներ և պարիսպներ փուլ եկան, շատ մարդիկ վնասուեցան. ձմեռուայ սաստկութիւնից շատերն էլ ցրտաւար եղան։

863 թ. մեծ պասին սաստիկ շարժ եղաւ և տեւեց մօտ երեք ամիս. շատ գեղեցիկ շինուածներ տապալեց և մեծ կոտորած պատճառեց։

869 թ. սաստիկ շարժ եղաւ Դուինում, որ տեւեց մի տարի. անդունդն անցան մօտ 120 հազար մարդ։

893 թ. սաստիկ շարժ եղաւ Դուինում գիշեր ժամանակ. շատ շինուածներ փուլ եկան. վնասուեցան կաթուղիկոսարանի եկեղեցին և ուրիշ վկայարաններ. հողի տակ մնացին շատ մարդիկ. մեռնողներն այնքան շատ էին, որ բոլորի համար գերեզմանի տեղ չեղաւ, շատ դիակներ մնասին ձգում էին փոսերի և դարափլակների մէջ։

995 թ. շարժ եղաւ. աւելի խիստ էր Ձորքորդ Հայք, Հաշտեանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պաղնատուն. էջերն հիմնայատակ եղան. սարեր ու ժայռեր պատռուեցան. անջրդի տեղերում ջուր բղխեց, իսկ սովորական ջրերը ցամաքեցան. դաշտերն ալէկոծւում էին և լեռներն իրար էին դիպչում. փոշին ինչպէս ծուխ բռնել էր օդի մէջ. քաղաքներ,

գիւղեր, ապարակներ քանդուեցան և իրենց տակն առան բնակիչներին, որոնք մնացան, մի մասն հազիւ կիսամեռ ազատուեցաւ։ Բալուի բերդն իւր շինուածքներով և Բալուի քարը փուլ եկան։ Վնասուեցան շատ տեղերի գեղեցկաշէն եկեղեցիներն ու ապարանները։ Այս շարժը տեւեց մօտ եօթն ամիս այն է Քաղոց ամսի վերջերից մինչև Նաւասարդ։

1003—1004 թ. սաստիկ շարժ եղաւ ամեն տեղ։ Շատ մարդ և անասուն կոտորուեցան։

1011 թ. Առաջաւորաց շաբթուն սաստիկ շարժ եղաւ։ Երզնկան կործանուեցաւ. շատ բերդեր և եկեղեցիներ տապալեցան։

1045 թ. սաստիկ շարժ եղաւ, շատ եկեղեցիներ փուլ եկան Եկեղեաց գաւառում. Երզնկա քաղաքն էլ քանդուեցաւ. երկիրը պատռուեցաւ, և շատ մարդիկ ընկղմեցան. երկար ժամանակ անդունդներից լսելի էին աղաղակի ձայներ։ Շարժը պատահեցաւ ամառ. ժամանակ և ամեն օր շարժ էր լինում։ Այն ամառը խաւարումն էր. արեգակն ու լուսինն արեան գոյն ունէին։

1114 թ. Մարերի 12-ին սաստիկ շարժ եղաւ գիշեր ժամանակ. շատ տեղեր քանդուեցան. կործանուեցան Սամուսատ, Հասան Մաուր, Քեսուն, Ռապան, Մարաշ, որ բազմամարդ քաղաք էր, ուր մնաց մօտ քառասուն հազար մարդ. կործանուեցան Սիս քաղաքը, շատ գիւղեր ու վանքեր. վնասուեցան հազարաւոր բիւրաւոր մարդիկ. Սև լերան վերայ Բարսեղեանց անապատում կրօնաւորներից 30 հոգի և երկու վարդապետ եկեղեցու տակ մնացին. նմանապէս Մարաշի մօտ Ցեստանց անապատում վանքը քանդուեցաւ և կրօնաւորները տակը մնացին։ Երբ շարժը դադարեցաւ, սկսեց ձիւն գալ, և շատերը ձեան տակ կոտորուեցան։

1138—1139 թ. սաստիկ շարժ եղաւ. կործանուեցաւ Գանձակ քաղաքը և բնակիչները մնացին փլատակների ներքև։ Փուլ եկաւ Աշնարակ սարն և Ձորակի առաջը փակեց, Ջուրը կանգ առաւ և եղաւ լիճ։ Երկու վարդապետ ընկղմեցան շարժից. Հաղբատու եկեղեցին փուլ եկաւ։

1157 թ. շարժ եղաւ ամեն տեղ և տեւեց մօտ տասն և չորս ամիս։

1165—1166 թ. շարժ եղաւ Երզնկայում։

1236 թ. շարժ եղաւ Երզնկայում և փլաւ մի եկեղեցի։

1251 թ. շարժ եղաւ և քանդուեցաւ Երզնկան։

1261 թ. Կիլիկիայում շարժ եղաւ. Վրաստանումն էլ շարժ եղաւ և շատ վնաս տուեց։

1268 թ. Երզնկայում շարժ եղաւ, տասն հինգ հազար մարդ մեռան։

1281 թ. Երզնկայում շարժ եղաւ։

1285 թ. շարժ եղաւ Տփխիս։

1287 թ. շարժ եղաւ Երզնկայում, շատ մարդիկ մեռան։

1289 թ. շարժը կործանեց Երզնկան։

1319—1320 թ. սաստիկ շարժ եղաւ արևելքում. ս. Թադէոս Առաքելոյ վանքը կործանուեցաւ, եօթանասուն և հինգ հոգի մեռան։ Նմանապէս շարժ եղաւ Դեղարքունիքում, ուր շատ գիւղեր քանդուեցան։

1363 թ. շարժը տարաւ Մշու երկիրն և շատ վանքեր խախտեց։

1439 թ. Մըմրուտ սարը կրակ ընկաւ և շատ տարի այրեց այն սարերը (Դրգուռի հրաբուղխը)։

1458 թ. Երզնկայում շարժ եղաւ. երեսուն երկու հազար մարդ մեռաւ։

1482 թ. Երզնկայում շարժ եղաւ. երեսուն հազար հոգի գետնի տակ մնացին։

1543 թ. ապրիլի 4-ին առաւօտեան սաստիկ շարժ եղաւ և շատ աւեր պատճառեց։

1584 թ. յունիսի 17-ին շարժ եղաւ Երզնկայում, քաղաքը քանդուեցաւ, և մեռան տասն և հինգ հազար մարդ. հինգ հազար մարդ գետնի տակ մնացին։

1641 թ. շարժ եղաւ Թաւրիզում և շրջակայքում, փուլ եկան գեղեցիկ շինուածներ։

1646 թ. ապրիլի 2-ին Աւազ Ուրբաթ գիշեր սաստիկ շարժ եղաւ Վան քաղաքում և շատ մարդիկ մեռան։ Փուլ եկաւ Վանայ բերդի մեծ մասը։ Նոյն տարին շարժ եղաւ Թաւրիզում։

1648 թ. սաստիկ շարժ եղաւ Վանում և շրջակայքում. քաղաքի պարսպի կէսը քանդուեցաւ. փուլ եկան եկեղեցիներ և մզկիթներ։

1668 թ. օգոստոսի 7-ին սաստիկ շարժ եղաւ և շատ քաղաքներ ու գիւղեր կործանուեցան։

1679 թ. շարժ եղաւ Երևանում։

1692 թ. ապրիլի 13-ին առաւօտից արեգակը խաւարեցաւ, այնպէս մութ էր, որ մարդիկ իրար մօտ գալով իրար չէին տեսնում։ Սաստիկ չարժ եղաւ։

1701 թ. մարտի 7-ին սաստիկ չարժ եղաւ Վան քաղաքում, և գիշերը կրկնուեցաւ. մի քանի օր չարժը կրկնւում էր. մարդիկ դուրս փախան և վրաններում կամ բացօդեայ ապրում էին։ Շատ տներ խախտուեցան։ Նոյեմբերի 30-ին դարձեալ սաստիկ չարժ եղաւ և մնաց չպատահեցաւ։

1704 թ. յունվարի 13-ին չարժ եղան Վանում ու յունվարի 27-ին Բաղէշում. շատ տներ քանդուեցան և շատ մարդիկ մնացին տների տակ։

1707 թ. յուլիսի 5-ին չարժ եղաւ։

1715 թ. մարտի 8-ին չարժ եղաւ Վան քաղաքում և շրջակայքում. ս. Բարթուղիմէոս Առաքելոյ վանքի գմբէթը թռաւ, Խոշապալ բերդի պարիսպը խախտուեցաւ. մնացուեցան շատ գիշեր. Արճիշու եկեղեցին փլաւ և երեսունեօթ մարդ տակը մնացին, որոնցից մէկը մեռաւ, միւսներն ազատուեցան մեծ մասով խեղացած։

1791 թ. դեկտեմբերի 27-ին սաստիկ չարժ եղաւ Թաւրէզ քաղաքում, որը կործանուեցաւ և անթիւ մարդ մեռաւ, շրջակայքում ևս շատ մնաց եղաւ՝ Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Գուշայ և այլն։ Վանումն էլ չարժ եղաւ, բայց մնաց չեղաւ։ Այս չարժի սկիզբն էր 1790 թուին, երբ Արզրում քաղաքն և շրջակայքը, նմանապէս Բասենու գաւառը, մեծամեծ մնասներ կրեցին. այդ իսկ աղէտի վերայ երգում են եղել և մի երգ, որի խօսքերից են *)։

«Տասուերկու թիւ երեսուն ինեին (1239 թ.)
Աստուծոյ բարկութիւնն հասաւ ինսանին,
Առանց պատանքի մեռել կըթաղեն,
Մի տար, Աստուած, մի տար դար Բասենին»։

Այս ամենին եթէ աւելացնենք ԺԹ դարում տեղի ունեցած չարժերի միջատակութիւնն, այն ժամանակ մեր տեղեկութիւնների ծառայը կընդարձակուի այսպէս.

1806 թ. չարժ եղաւ Շամախի։

1827 թ. չարժը մնասեց մի քանի տեղեր Արարատեան երկրում, նոցա մէջ և Ուշուայ ու Կեչառիսա վանքերին։ Հետեւեալ 1828 թուին չարժ եղաւ Շամախի։

---

*) 8. Բաղմավէպ 1862։

1840 թ. յունիսի 20-ին մեծ շարժ եղաւ ամեն տեղ, և տեւեց մինչև սեպտեմբերի 28. Մասիս սարը պատառուեցաւ. Ակռոի գիւղը ս. Յակոբայ վանքի հետ միասին կործանուեցան. շարժը մեծ վնասներ տուեց Նախիջևանին, Բայազիտին, Մակուին, Թաւրէզին, Տաթևին, Կաղզուանին, Տիֆլիսին, Արզրումին և այլն (տ. մանրամասնութիւնները Շահխ. Պատմ. 366)։ Այդ մեծ շարժի տպաւորութիւնը ժամանակակիցների վերայ այնքան սարսափելի էր, որ աշուղ Ադրար Ադամն Աստուածային բարկութեան նշան էր համարում այդ. պատուհասից չարձան ոչ հայ, ոչ թուրք, ոչ Ջհուդ, ոչ ասորի. յուզուած և սարսափած նա երգում է.

«Ո՞վ էր տեսել էս աշխարհս էս օրին,
Մեր մեղացն շարժը քանդեց Ակռոին։
Զարհուրելի էր շարժի եկած օրը.
Սար ու ձոր իրար դիպան, ասեմ ինչը.
Մէրը որդուն, որդին մոռացաւ հօրը,
Սարսափանք էր նայելիս Մասսայ սարին։
Լերին քակեալ, թնդաց, որոտաց ձորը,
Ախմիշ էլաւ, եկաւ ձիւնաբեր ջուրը,
Հոսեաց տարաւ վանք, աւազան, աղբիւրը,
Դիմի հաւաքեց, ածեց լանդոնդաս խորին։
Բարկացել էր մեր Արարիչն էս հետին,
Իրար դիպաւ, շարժեց երկինքն ու գետին,
Չի խնայեց սուրբ Յակոբ հայրապետին,
Որ քեռի էր Լուսաւորիչ Գրիգորին»։

Մասիսի նոր պատառուածը գրեթէ փոխեց բոլորովին նախկին տեղագրութեան պատկերը. մինչև յուլիսի 5 ցեխոտ հեղեղը, վերից վար հոսելով, քանդեց տապալեց ամեն ինչ. Ակռոի գիւղի բրգաձև տեղը բարձրացաւ, այն տեղերն, ուր լառաջ Ակռու տափերն ու այգիներն էին, քարակուտակ և սառցակուտակ տարածութեան փոխուեցաւ։

1843 թ. հոկտեմբերի վերջերին շարժ եղաւ Արզրում, ուր բերդի պարիսպը փուլ եկաւ և տներ քանդուեցան։

1847 յունվ. փետրվ. 1848 սեպտեմբ. և 1849 թ. շարժ եղաւ Շամախի։

1850 և 1852 թ. յունիս ամսին սաստիկ շարժ եղաւ Արզրում, ուր մեծ վնասներ եղան։ «Երջակաչքում Քէվկիրլի գիւղի մէջ մի մեծ տուն իւր պարտէզով ու հողով իւր տեղից

ընկաւ հարիւր քսալ հեռու մի տեղ, իսկ նորա նախկին տեղի պատահածից սև ջուր բղխեց *)։

1859—1861 թ. շարժ եղաւ ամեն տեղ՝ Արզրում, Շամախի, Թաւրէզ և այլն. միայն Արզրումի շարժը մօտ երեք հազար մարդու կորուստ ունեցաւ։ Մեծ կորուստներ եղան և միւս տեղերում։

1869 թ. օգոստոսին շարժ եղաւ Շամախի, այս շարունակութիւն էր 1868 թ. համատարած շարժի։

1872 թ. յունուար սեպտեմբեր շարժ եղաւ Շամախի, Գանձակ, Թաւրէզ և այլն։

Ի վերջոյ 1899 թ. Ախալքալակ, 1901 հոկտեմբերից 1902 փետրուար Արզրում, 1902 յունուար 31-ից մարտ Շամախի սաստիկ շարժեր եղան, որոնք մեծամեծ կորուստներ պատճառեցին։

Գ.

Երբ բնական երեւոյթ շարժն իսկապէս չունի իւր հաստատուն բացատրութիւնը, կամ, աւելի ճիշդ ասած, այն բացատրութիւնները, որոնք կան, լայտնի են իրրև ենթադրութիւններ։

Հայաստանի հին շարժերն արդասիք են հրաբղխային երեւոյթների։ Լեռների ձեւը, հողային շերտերի կազմութիւնը, բոլորը, ջերմուկները, լեռնական լճերն ու լճակներն և այլն այդ ենթադրութեան ապացոյցներն են։ Մարած հրաբուղխներ են, օրինակի համար, Մասիս, Արագած, Նպատ, Սիսիան, Դրգուռ (Նիմրուդ, Մամրուտ), Սաւալան, Սոհուեղ և այլն գագաթները։ Հրաբղխային ծագումն ունին Գեղամայ ծովը, Նալչատուակ լիճը, Արագածի և Դրգուռի կատարների լճակները, որոնք հրաբղխի ջրալիր բաժակներ են։ Սակայն կարելի չէ միանգամայն պնդել թէ մեր երկրի բոլոր շարժերն հրաբղխային են։ Ուրիշ երեւոյթներ էլ կան, որոնց ազդեցութեամբ երկիրը շարժ է լինում. նոցա մէջ ամենից լաւաջ լիշելու է արեգակի բոլորական խաւարումը, որ շարժի պատճառ է լինում։ Այդ ենթադրութեան տեղիք տուողն այն է, որ դիտած են թէ 18 երկրաշարժից 13 տեղի է ունեցել արեգակի խա-

*) Տես Բազմ. 1862.

ւարման ժամանակ։ Մեր տարեգրութեան մէջ այդ երևոյթին հաստատութիւն գտնում ենք 1045 և 1692 թուին, երբ արեգակի մեծ խաւարումն և մի և նոյն ժամանակ համատարած շարժ եղաւ։ Դիտենք, որ 1868 թուին օգոստոսի 18-ին խաւարեցաւ արեգակն և ապա տեղի ունեցաւ ամենասարսափելի շարժերից մէկը 1868—1869 թուերին, որ համատարած էր։ Ս. Աւետարանի մէջ էլ գտնում ենք նոյն երևոյթի հաստատութիւնը. լայտնի է, որ Քրիստոսի խաչելութեան ժամանակ արեգակը խաւարեցաւ և երկիրը շարժ եղաւ (տ. Մատթ. Իէ. 45, 51—52, Մարկ. ԺԵ. 33 և 38. Ղուկ. ԻԴ. 44 և 45)։ Այս բոլորական խաւարումն էր, որ 33 թուի մարտի 19-ին տեսանելի եղաւ Եգիպտոսում, Եթովպիայում և այլն *)։

Շարժի այսպիսի կախումն ունենալն արեգակի խաւարումից միակ ապահով միջոցն է, որով մարդիկ կարող են նախապատրաստուել ապէտի համար. աստղաբաշխներն, օրինակ, 1861 մարտի 1-ին Աթէնքում տեղի ունեցած շարժի մասին արդէն ամիսներ լաւագ ճիշդ գուշակել էին։ Հայոց տարեգրութիւնների մէջ արեգակի խաւարման մի քանի տարիներ կան, ինչպէս են 614, 969, 1036, 1177, 1239 և 1717 թուականները. արդեօք այդ թուերից մէկը կամ միւսը մի և նոյն ժամանակ շարժի թուական չէ։ Դիտենք, որ մօտաւոր համաձայնութիւն կայ այդ և շարժի թուականների մէջ։ Անճշգութիւնը կարելի է բացատրել կամ գրչի թերութեամբ կամ հեղինակներից մի քանիսի ժամանակակից չլինելով։ Այս խնդիրը բաղդատական հետազօտութեան կարօտ է։

Արեգակի բոլորական խաւարումից զատ շարժի պատճառը համարւում է արեգակի և լուսնի ձգողական զօրութիւնը։ Ինչպէս լայտնի է, այդ ձգողութեան ուժով ամէն օր լինում է ծովի մակընթացութիւնն և տեղատուութիւնը։ Նոյնպէս ձգողական զօրութիւնն ինչպէս որ ներգործութիւն ունի այն ջրի վերայ, որ երկրիս երեսին է, ենթադրութիւն կայ, թէ նոյն զօրութեանն ենթակայ են և երկրագնդի խորքում գտնուող հեղուկները կամ երկրագնդի միջուկը կազմող հեղանիւթ ջերմ զանգուածը։ Երբ որ արեգակն և լուսինը միաժամանակ այնպիսի կէտի են հասնում, որ երկուսը միասին գտնւում են երկրագնդին աւելի մօտիկ դիրքի մէջ, նո-

*) Chronolog. Veterum, Seyfferth, Leipz. 1855.

ցա ձգողական զօրութիւնն աւելի ուժով է ազդում ստորերկրեալ հեղուկների վերայ, որոնք մղուելով ներքևից դէպի վեր, դէպի երկրագնդի կեղևը, շարժ են յառաջացնում այնպիսի տեղերում, ուր երկրաբանական պայմաններ նպաստաւոր են։ Բայտնի է, որ ստորերկրեալ անձաւներ և անջրպետներ կան, որոնց մէջ երբեմն օդը չափազանց խտանում է և, ձգտելով դատարկ տարածութիւն գտնելու, ներքևից ճնշում է գետինն և պատառում։ Շատ տեղ գետինն երևէջներ է անում նոյն ձգողական զօրութեան ուժով. մի տեղ գետինը բարձրանում է սովորական մակերևոյթից, մի այլ տեղ նստում։ Այսպիսի դէպքերում հաւասարակշռութեան խանգարումն յառաջացնում է շարժ։ Այս երևոյթի հաստատութիւնը գտնում ենք 735 և 995 թուերի շարժի նկարագրութեան մէջ. տարեգիրն այնպէս է լիշում, իբրև թէ գետինն իւր բնակիչներով սուզւում ընկղմում է անդունդը։ Այս ամենից զատ դիտուած է, որ շարժերի մեծ մասը տեղի է ունենում լուսնի ամենաբարձր դիրքում գտնուելու և երկրագնդի լուսնին ամենամօտիկ լինելու ժամանակ։ Երբ շարժ է լինում, այն ամեն ազդեալի դէպքերի հետ միասին, որ հանդիպում են մարդուն և նորա բնակարանին, տեղի են ունենում և այլ ահարկու տեսարաններ։ Սաստիկ որոտումներ ու ձայներ են լսւում գետնի տակից, երբեմն այդ ձայներն հնչում են ինչպէս խիստ մրրիկ, գետինը ճաքճաքում է, և երբեմն նորա պատառուածներն արագութեամբ բաց ու խուսի են լինում. օդը սաստիկ մրրկում է, շատ անգամ առանց արևի խաւարման մթնոլորտը բոլորովին խաւարում է, մռայլ ահարկու ամպերից յանկարծական որոտումներն առաւելի ապաւորութիւն են գործում, տեղատարափ անձրևը մերթ կարապետում է բուն աղէտին, և մերթ լոկ նախազգուշութեան նշան տալիս, ծովը սաստիկ ալէկոծւում է, և փոթորիկը լուսանատական սարսափ ազդում, երկրի մակերևոյթի վերայ յանկարծ փոսեր և ուռուցքներ են լայտնւում, տներ, ագարակներ և այլ շինուածներ յանկարծակի սուզւում ծածկւում են գետնի տակ։ Կարծես մի ընդհանուր ցաւ պաշարում լաիշտակում է տեսանելի աշխարհին և նորա ան ու երկիղը փրկում է միաժամանակ և մարդիկներին։ Ցարեգրութեան ամեն մի հատուածն այս ահաբեկութեան, այս երկիղի, հակիրճ պատկերն է, որ մեզ զգաստար է տալիս այն բնական փոփոխութիւնների մասին, որոնք մեր հին հայրենիքի

սարբ, քարբ, ձորն ու դաշտը կրել են սուրբերկրեայ, սանդարամետական, ոյժերի բախումից և տիեզերքի բնական ընթացքի ընդհարումներից։ Թողնենք, որ մեր տեղը խօսի հին օրերի տարեգրութիւնը, որ քաղուածաբար դնում ենք ընթերցողի առաջ ժամանակակից պատմիչների և տարեգրների խօսքերով։

Դ.

Թ. 602—603. «Ի նոյն ամի սուրբ Կարապետն, ինննակնեան տեղիսն էր, փլաւ. զի շարժ խստագոյն եղև։ Տ. Յովհ. Մամիկ. Գ. Բ.

Թ. 735 լուլիսի 21, Հրոտից 15։ խաւար անտեսանելի կալաւ զՎողանն սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանեաքն հոգիք իբրև տասն հազար։ Վասն այնորիկ Վայոց Ձոր անուանեցաւ։ Տ. Մովս. Կաղանկ. Գ. ԺՁ.

«Ցանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն և կալաւ խաւար չօշափելի զդաւառն ամենայն զաւուրս քառասուն, և շարժումն և զդրգռումն սաստիկ. զի եհալր երկիրն ահեղ զողացմամբ լանդնդոց և բարձրանալր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու փլուզանէր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քաքտէին, տունք և ապարանք գեղեցիկք լինէին գետեղմանք բնակչաց, ազգիւրք խցէին, գետք կորնչէին և ամենայն տեղի երերէր տատանմամբ, և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ լանդնդոց և ի վերուստ լօդոց։ «Վայ ձոր, վայ ձոր». և կենդանեաքն ընկղմեցան ոգիք իբրև տասն հազար, զորս գիտէին ի թիւ արկին, և զանծանօթիցն ոչ օք գիտէր զհամարն. լաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոյ Ձորոյ։ Տ. Ստեփ. Օրպէլ. Գլ. ԻԹ.

(Թ. 726 «Վայոց Ձորոյ ընկղմումն». Թ. 737 «Շարժ ահագին։ Երկու նոր աստղ երևեցան՝ մին լարևելք և մի լարևմուտք։ Երկու ամիս օդդ փոշի տեղեաց թիզ մի։ Եղեն ցոլմունք աստեղաց և շարժ սաստիկ։ Տ. Մխթ. Այրիվանեցի).

Թ. 800—802 «Յայս ժամանակս եղև շարժ սաստիկ. և լերիք Կողատու (Կողատու), որ կան աստի և անտի, հպեցան առ միմեանս, զոր տեսին մարդիկ, և փլաւ լեառն մի և անկաւ լեփրատ, և արգելեաց զնա օր մի, և գնալր գետն ի վեր, և բազում լերինք խղեցան, և լոլով աղբերք բացան Ջրոյ, և



կպրոյ, և նաւթոյ, և բազում խցան լաղբերաց։ Տ. Սամ.Անեցի։ (Նոյնը տես Մխ. Այր. 791 թուին)։

Թ. 854. «Շարժ լաղուհացան, որ ի Դուին, մեռան ի միում գիշերի երկոտասան հազարք։ Տ. Մխ. Այր.

Թ. 858. «Ցամս Զաքարիայի Հայոց կաթուղիկոսի լեռ Լ. ամի գերութիւնն Հայոց» (տ. Թովմ. Արծր. գ. 22) «սահգին իմն շարժմանց եղելոց ի Դուին քաղաքի բազում տապանութիւնս և փլուզմունս տանց և պարապաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և ղղրգումն առնոյր քաղաքն, այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր և այնպէս սահգին իմն լինէր վասանգ տագնապին, մինչև ոչ օր մնայ ընդ լարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հաշեալ հառաչէին։ Իսկ ցրտաշունչ սառնամանիքն ձմերմնուն առաւել բերէր զլքուցումն հեծութեան, զի հոլովք մեծալք և ծայրատեալք լինէին։ Իսկ սուրբ հայրապետն Զաքարիաս ուժգին աղօթիւք և պաղատանօք մշջինամուտն և աղերսալի աղօթս առ բարեգութն Աստուած մատուցանէր և երկնային ազդեցութեամբ ի բաց բառնայր դատաստանն բարկութիւնն, անվնաս զեկեղեցին Քրիստոսի պահեալ ի բազմաբեր ցասմանէ վասանգին։ Տ. Ցովհ. կաթ. Իլ.։

Թ. 863. «Ի քառասնորդս պահոց ի փոքրիկ շաբաթուն եղև շարժումն սահգին և զբազումս կոտորեաց և զգեղեցիկ շինուածս տապալեաց, և տեսաց մինչև ի ժամանակս երից ամսոց։» տ. Սա. Ասող. Բ. Բ. (Նոյնը տես և Սամ. Անեցի 865 թուին)։

Թ. 869. «Ի լերեքշաբիւր լութեատան թուականին Հայոց եղև անհնարին և հիացուցանող շարժն Դուին, որ զամ մի ողջոյն դողացեալ խորասուզեաց լանկունդս անձինս իբրև երկոտասան բիւր մարդկան։» Տ. Մովս. Կաղ. Գ. 21.

Թուին 893. «Զայսու ժամանակաւ (չերրորդ ամի թագաւորութեանն Ամբատայ ի վերայ Հայոց») սահգին իմն լեզակարծումն ժամու սաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դուին քաղաքի բազում սառնումն և սարսափումն և զղրգումն և կործանումն զբնակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր. վասն զի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն, և զապարանս զլխաւորացն, և զսուտս ամենայն իբրև զերիզուտ վարս առապարաց լական թօթափել տեսանէիր։ Այլև զաստուածաշէն եկեղեցիս կաթուղիկոսարանին, և

A 1055



զալ ևս հաստատեղոյս վկայարանս դղրդեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէին, որ գրեթէ իբրև զմայարս վիմուտս դերբկաց սարսափելի անսողացն երևիւր։ Այլև հեղձամղձուկ լարկածածակ հողաթաւալ հողահեղձոյց սատակումն դիակոյտ բաղմութեանն, որ կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ, լորդորէր զնա ի բաղում ողբս և լարտասրաթոր կականմունս։ Թողում ասել զաղգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կականումն և ողբումն և աչխարումն դուժից ճչոյ և կանչոյ և կաւանչոյ, և աղիողորմ ձայնք երգեցիկ զուսանաց (կուսանաց) և սեղգեաց կանանց և արանց վչտահար հեծութեամբ սգացելոց մինչև լերկինս բարձրացեալ հասանէր։ Իսկ զբազմութիւն դիականց ոչ բաւեալ տալ զերեղմանացն, զբազումն ի վիմս և խորափոս և ի դարափկաս ընկեցեալ լինէին։ Տ. Յովհ. կթ. ԼԲ, (տպ. Երուսաղ.)։ «Այս չարժումն սատակագոյն որ եղև լաս Զաքարիայի Հալոց կաթուղիկոսի լեռ Լ. ամի գերութեան Հալոց»։ Տ. Թովմ. Արծ. Գ. 22.

Թ. 995. «Շարժեցաւ երկիր, բայց սատակագոյնս աչխարհն Զորրորդ Հալոց, Հաչտանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պաղնատուն։ Եւ բոլորովին փլան չինուածք ամենայն ի հիմանէ դղրդեալք... հերձան լերինք և պատառեցան վէմք, բացան աղբիւրք լանջրդին տեղիս և ցամաքեցան ելք սովորական ջուրց, դաչտք ծածանէին և լերինք որպէս առ միմեանս խոնարհէին. ծխոյ նմանութեամբ՝ փչուին ծառացելոյ զոգոն ընոյր։ Եւ ամենայն չինուածք քաղաքաց, գիւղից և աղարակաց տապալեալ, զբնակիչսն ի ներքոյ առնէին, մեռեալս և կիսամեռս գնոսա առնելով, և մնացելոցն կենդանեաց ճիչք լալեաց և վայք ողբոց ի վեր բարձրանային։ Եւ բերդն Բալու հանդերձ չինուածովքն և քարն ևս փլուզանիր։ խարխաշեալ ճաղաղջուր, բերդին Դիկաթայ, Ամթայ և Ամթայ և ամենայն քարուկիր գեղեղկաչէն եկեղեցեաց և աղարանից։ Այս լինէր լամսեանն Փաղոց ի վերջումն աւուր։ և զայս ձև օրինակի կացեալ ամիս Լ. մինչև ցնաւասարդ»։ Տ. Սա. Ասող. Գ. ԼՁ.

Թ. 1003—1004. «Եղև չարժ սաստիկ ընդ ամենայն երկիր։ երերեալ դողաց ամենայն արարած. լսէի և բարբառոյ բարկութենէն ոչ ժամանէին խստութեան և հաղորդութեան։ մարդ և անասուն պակասեցան լերկրէ, և մնացեալ

չորքոտանիք անմարդ մնացեալ շրջէին ի վերայ երկրի։ Տ. Մատթ. Ուռհ. Լէ. (նոյնք ա. Սամ. Ան. 1007 թ. և Սմբ. Սպար. 1008 թ.)

Թ. 1011. «Շարժ սաստիկ լեռաջատուրին։ Ընկղմեցաւ երգնկա ողջոյն, և մնաց միայն տունն Կիրակոսի ողորմածին։ Բազում եկեղեցիք և բերդք տապալեցան»։ Տ. Մխ. Ալր.

Թ. 1015. «Եղև շարժ ահաւոր և սոսկալի, և գողացաւ հասարակ ամենայն սիեղերք... Բազում եկեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց ի յեկեղեաց գաւառին, և քաղաքն, որ Երզնկան կոչի, փլաւ առհասարակ և պատառեցաւ երկիրն, և արք և կանայք ընկղմեցան ի խորս անդնդոց, և զաւուրս բազումս գայր ձայն ազաղակի նոցա ի խորոց անդնդոց։ Եւ էր լամառնալին ժամանակին, և աւուր աւուր շարժէր երկին (sic) լամ՝ն լայնմիկ... Եւ լամառնալին ժամանակին խաւար և մութն լինէր ի վերայ երկրի, մինչև արեգակն և լուսինն ի կերպս արեան երեէին։ և լորժամ ելանէր ի կամարն, լիատակ էր»։ Տ. Մատթ. Ուռհ. Կէ. (նոյնք ա. և Սմբ. Սպար. 1045 թ.)

Թ. 1104. «Ի հինգ հարիւր լիսուն և երեք թուին ի Մարերի երկոտասանն գողաց երկիր հանդերձ աղիաղրմամ ձայնիւ, որ գայր ի ներանց և ի դարափուլ վիմաց. և օրն էր կիւրակէ և ձայնն վսա... Եւ փլան լոլով քաղաքք, և մեռան քառասուն հազար անձինք, զոր թուել կարացին»։ Տ. Վարդան պատմ. Կէ. ա. և 1114 թ.

Թ. 1114. «Յամսեանն Մարերի լերկոտասան աւուրն լաւուր կիւրակէին տօնի Խաչ Գիւտին *) եղև մեծաստատ արհաւիրք ի վերայ տիեզերաց... մինչ դեռ էաք լսիչ տակիսալ ի խոր քնոյ, եղև լանկարծակի հայթուն և թնդուն ահաւոր, և գոռալր առհասարակ ամենայն արարածք, և եղև զղրգուն աստկասալ և ահագին թնդմամբ շարժեցաւ երկիր... և լերինք, և պատառեցան ապառաժ վէմք, և հրձան բլուրք... Եւ լեալի լինէր ձայնն զկնի շարժմանն իբրև զմի ժամ դիզերին. և լսէի բարբառոյ բարկութեանն ամենայն օր լուսանատեցաւ ի կենացս և ասացին, եթէ ենաս օր կասարածի և դատաստանի մերում, զի զայն աւուր զպատկերն ունէր. օրն էր կիւրակէ, և ձայնն ի վառի ձայնն էր, և լու-

*) 1114 թ. նոյ. 29-ին Ս. Անդրէի տօնի օրը (այլ ոչ Գիւտ խաչի) տ. Dulaurier 155.

սինն փուլ էր, զամենալն պատճառ զվերջին աւուրն ունէր. և անա կալին անաբեկեալ իրրև զմեռեալս լուսահատեալք։ Եւ լայսմ գիշերին կործանեցան բազումք քաղաքաց և գաւառաց. և ամենայն որ կործանեցան, էին զաւառք Փոանկաց և այլ գաւառաց կամ այլազգեաց ոչ եղև վնաս ոչինչ։ Եւ լայսմ գիշերի կործանեցաւ Սամոսատ քաղաք և Հասան Մուր, Բեսոուն, և Թաղան, և Մարաշ քաղաք անհաւոր, և կործանեցան ոգիք իրրև քառասունհազար, զի էր բազմամարդոս քաղաք, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի։ Եւ այսպէս ի Սիս քաղաք կործանեցաւ անթիւ բազմութիւն արանց և կանանց, և այլ բազում զեղք և վանորայք, և անհամար արք և կանայք հազարս հազարաց և բիւրս բիւրոց կործանեցան։ Եւ եղև ի Սեաւ լեառն անուանի, լանապատն որ կոչի Բարսեղեանց, էին ժողովեալ լեկեղեցորհնէք սրբ սնեալ կրօնաւորք և վարդապետք Հայոց, և կալին ի պաշտօն Աստուծոյ, անկաւ եկեղեցին ի վերայ նոցա, և երեսուն կրօնաւորք և երկու վարդապետք կատարեցան ի ներքոյ նորա, որ կան մինչև ցայսօր։ Նոյնպէս եղև մերձ ի Մարաշ ի մեծ անապատին, որ ասի Յեսուանց, անկաւ և կործանեցաւ վանքն, և ամենայն դասք կրօնաւորացն։ Եւ լորժամ դադարեաց շարժն, սկսաւ ձիւն գալ, և զամենայն աշխարհ ի ներքոյ կոտորեաց։» Տ. Մատթ. Ուռհ. Մժէ.

Թ. 1138.—1139. «Ի հինգհարիւրութեան ութ թուին եղև շարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և տապալեցաւ շինուածքն որ ի նմա ի վերայ բնակչաց իւրոց... փլաւ և լեառն Ալհարակ ի շարժմանէն և արգել զձորին որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծովակ, որ է մինչև ցայսօր, և լինին ի նմա ձկունք ազնիւք։» Տ. Կիրակոս Գանձակեցի, 67։

Նոյն. «Ընդ աւուրսն այնոսիկ եղև լանկարծակի մէջ և մառախուղ, և լցաւ առհասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ անագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ. և շնորհօք Աստուծոյ ապրեալ եղեն Նորընծայ կաթուղիկոսն (Ազուանից), բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր (Թոքակերի որդի), հանդերձ այլ բազմութեամբ արանց և կանանց և մանկտուոյ, որոց ոչ զոյ թիւ, զորս սպանին շինուածքն անկեալ ի վերայ... փլաւ և լեառն Ալհարակ և կապեաց զձորակ, որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծով որ է մինչև ցայսօր ժամանակիս։» Տ. Կիր. Գանձ. 101.

Թ. 1138—1139 «ԻՆՁՐ, թվին ի ԺԷ. Արեդ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք և սուրբ վարդապետքն Գրիգոր և Սարգիս ընկղմեցան, և եկեղեցին Հաղբատայ փլուզանիս» Տ. Սամ. Անեցի (Նոյնը տ. Մխ. Այր. 1141 թ.)։

Թ. 1157. «Ի հոկտեմբերի ամսոյ ԻԶ. սկսաւ շարժ լինել յամենայն երկիր. և բաղում քաղաքք տաճկաց ի տանմանս Արաբիոյ, որ է Հալապ, կործանեցան ի հիմանց. և զաղգս քրիստոնէից պահեաց Տէր մինչև ցայժմ. և անզգաստ լինէր շարժն մինչև ի փոխել թուականիս, որ ոչ կալը համար կամ թիւ շարժմանն զամիսս չորեքտասանս» Տ. Գրիգոր երէց, Մակ.։

Թ. 1165—1166. «Եղև շարժ ԵրզՆկայնս» Տ. Սամ. Ան. և Վարդ. Պատմ. (Նոյնը Մխիթ. Այր 1161 թուին)։

Թ. 1236. «Շարժ եղև ԵրզՆկան. եկեղեցի մի փլաւ» Տ. Առ. պատմ.

Թ. 1251. «Շարժմամբ կործանեցաւ ԵրզՆկայնս» տ. Մխ. Այր.

Թ. 1261. «Ի Կիլիկիայ շարժ եղև» «Շարժն եկն ի Վրացաստան և բաղում վնաս արարս» Տ. Մխ. Այր.

Թ. 1268. «Շարժ եղև ԵրզՆկայն լաւոր կիւրակէի, 15 հազար մարդիկ մեռանս» Տ. Առ. պատմ.

Թ. 1281 «Շարժ եղև ԵրզՆկան, Աստուած պահեաց, որ ոչ փլաւ» Տ. Առ. պատմ.

Թ. 1285. «Շարժն երեկ ի Տփխիս» Տ. Սամ. Ան. Շարայար.

Թ. 1287. «Մայիս ամսոյն շարժ եղև ԵրզՆկան, բաղում մարդիկք մեռան, որ զՆիւն միայն Աստուած գիտէ» Տ. Առ. պատմ.

Թ. 1289. «Շարժմամբ կործանեցաւ ԵրզՆկանս» Տ. Սամ. Ան. Շար. (Նոյնը տ. Առ. պատմ. 1290 թուին)։

Թ. 1308. «Շարժն տարաւ զվանքն ս. Առաքելոյն Թադէոսի, զեկեղեցին և զվանքն կործանեաց և Հն. հոգի սպանս» Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1319—1320. եղև անագին շարժ լարևելս, և զԹադէոս առաքելոյն վանքն և զեկեղեցին կործանեաց, և զտունսն փլուցս, և Հն ոգի եսպան. զոր վերատին չինեաց եկեղեցին և զվանքն տէր Զաքարէ։ Այլ և ի Պեղաքունի ընկղմեաց ըզբազում գեօղս հանդերձ արամբք, և չալ ևս տեղիս» Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1363. «Շարժն զՄշու երկիրն տարաւ և զվանորս լք խախտեաց» Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1439. «Հուր անկաւ ի Մըմրուտ սարն և չատ տարի այրից զայն սարերնու» *) Տ. Նեռ. Հյց. 118 և 127.

Թ. 1458 «Շարժ եղև լերդնկան. ԼԲ. հազար մարդ մեռաւ. և ոչ այլչափ միայն, այլ ԺԶ անդամ շարժ եղեր լերդնկան քան զայս այլ սաստիկ» Տ. Նեռ. Հյց. 187. տ. և Ա. պատմ.

Թ. 1482. «Շարժ եղև լերդնկան. ԼՌ. հողիք մնացին ի ներքոյ դանանոյն» Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1543 «Ապրիլ ի 4 օրն չորեքշաբթի ի լուսանալ աւուրն Ա. ժամն սաստիկ շարժ եղաւ. Ողորմեա փոխին ասելու չափ եղաւ, որ երերաց, և չատ աւեր արաւ» Տ. Անդր. Թոխ.

Թ. 1584. «Շարժեցաւ երդնկան լունիսի ԺԷ. Դ. ժամուն ս. Լուսաւորչի երկուշաբթի. փլաւ քաղաքն և մեռան ԺԵԹ, արք և կանայք. ԵՌ մարդիկ մնացին ի ներքոյ երկրի, զորս լերկրէ կիսամահ, ոմանք մեռան և կէս խեղեցան» Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1641. «Շարժ եղև ի Թավրէզ և վիր շրջակայսն, և փլաւ Շամշալանն և Ուստաչիկերտ ամարաթին» «Տ. Սամ. Ան. Շար. տ. Նոյն և Ա. պատմ. Լ.

Թ. 1646. «Ապրիլ 2 Աւագ Ուրբաթու գիշեր սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան, և բազում մարդիկ մեռան, և չատ աւերութիւն եղև» Տ. Ցիշատ. Ման. 341.

Նոյն. «Մեծ շարժ եղև ի Թավրէզ. Եւ ի սոյն ամին ի շարժմանէ մեծ մասն բերդին Վանայ փլաւ» Տ. Անդր. Թոխ.

Թ. 1648. «Շարժ սաստիկ եղև ի Վան և ի շրջակայսն իր, և եկեղեցիք և մզկիթք բաղումք փլան, և կէս պարսպի քաղաքին» Տ. Սամ. Ան. Շար. տ. Նոյն և Ա. պատմ. Լ.

Թ. 1668, «Օգոստոսի 7 օրն ուրբաթ Դ. ժամուն խիստ

---

*) Ցայսմ ամի (պդ=1441) մեծ նշան եղև. քանզի լեռան Մամրուտ կոչեցեալ, որի մէջ Իլաթ և Բաղէշ, լանկարծակի գոգաց իրրև զսաստիկ պատուհան ամպոյ... սարն պատառեցաւ լայն իրր զքաղաք մի և այլ փոքր փոքր, և ի պատառուածէն ի վեր հուր ցոլացեալ երևէր մառախլապատ ծխով և ժանտհոտութեամբ, որ և ազդէր ի հոտոյն հիւանդանալին, և քարինք եռալին լանգին բացոյն, և մեծամեծ վէմ ընդ երկինս ձգէին ձայնիւ որոտմամբ և այլն. տ. Ինձիճ. Հնախ. սա. Ա. 106.

մեծ և անադին չարժ եղև, որ ոչ տեսեալ էր և լուեալ բնաւ, զի քաղում քաղաք և գիւղք կործանեցան, տունք և ապարանքք։ Տ. Անդր. Թոխ.

Թ. 1679. «Շարժ Երևան»։ Տ. Զաք. տարկ. 104.

Թ. 1692. «Ապրիլի 13 լառաւօտ, արեգակն նուազեցաւ և մէգ պատեաց զերկիր այնքան, զի մարդիկք մերձ գոլով զմիմեանս ոչ տեսանէին ի ցերեկի. և մինչև լերեկոյ կարմիր փոշի տեղեաց ի լերկիր. և եղև մարդամահ անդրանկաց, և սաստիկ շարժ»։ Տ. Ցիշատ. Ման. 348.

Թ. 1701. «Մարտի 7 ի մեծ պահոց առաջին ուրբաթն սաստիկ շարժ եղև ի քաղաքս Վանն. և ի դիշեր ևս շարժ եղև, և ի կիրակէն երկու և երեք անդամ շարժ եղև, և ի չորեքշաբաթ առաւօտուն ևս սաստիկ շարժ եղև որ ամենայն քաղաք անարեկ եղեալ սասանեցան, և հալ և տաճիկ ամենեքեան թողեալ զտունս իւրեանց ի քաղաքէն ի դուրս կազմեցին վրանս և մնացին տամբք և տղալիւք ոմանք լալգիս, ոմանք ի դաշտս և ի գերեզմանատունս աւուրս բազումս. և սակաւ ոմանք, որ ի քաղաքս մնացեալք էին, զընացեալ ի ժամատունն ննջէին տամբք իւրանց, և ի մեկ շաբաթու օրն գարձեալ անդին շարժ եղև, յորմէ քաղում տունք խախտեցան ի մէջ քաղաքին և ոչ փլան, և ոչ մարդոյ ինչ մնաս եղև. սակայն ի գեղն Բեղդ սակաւ ինչ տուն փլան։ Եւ այսպէս եկաց քաղաքս լերերմանի իբրև գնաւ ի ջուրս մինչև ի յօրն դարնանամտին (sic), և ապա հանդարտեցաւ Նախախնամութեամբն Աստուծոյ. Եւ հասեալ ի Նոյեմբերի 30 կրկին ևս սաստիկ շարժեցաւ և մնաս ինչ ոչ եղևոյ։ Տ. Ցիշատ. Ման. 352.

Թ. 1704. «Յունվարի 13 մեծ շարժ եղև ի քաղաքս Վանն։ Յունվարի 27 մեծ շարժ եղև ի քաղաքն Բաղէշ, և բազում տունք փլան, և շատ մարդիկ ի ներքոյ տանց մնացին»։ Տ. Ցիշատ. Ման. 358.

Թ. 1707. «Յուլիսի 5 շարժ եղև սաստիկ»։ Տ. Ցիշատ. Ման. 365.

Թ. 1715. «Մարտի 8 լառաւօտ, շարժ եղև ի քաղաքս Վանն, յորմէ ի լալգիքն սուրբ Յակոբայ վերս տուն մի փլաւ, վեց հոգի տակն մնացին, չորսն մեռան և երիուքն ապրեցանն։ Նաև Բարթուղիմէոս Առաքելոյ գմբէթն թռաւ. և խոշաքար քարդի բոլորն խախտեցաւ, Ղարատարաղ քարդի լիշադին

վերայ քաշկն փլաւ և զլիշադն աւերեաց, որ և բազում մարդիկ ի ներքև մնացին, այլ և Սաթմանից քաշկն փլաւ և զբազումս սպան. և այլ բազում գիւղք տապալեցան, և լոլովք մնացին ի ներքև, և բազում վնաս եղև Մահմատանայ երկրին։

Ի յԱրձէշ քաղաքի ի մեծ հինգշաբաթի զիշերն առաւօտեան ժամուն չարժ եղև, որ եկեղեցւոյ գմբեթն անկաւ և 37 մարդ ի ներքև մնացին։ Բայց խնամօքն Աստուծոյ մինն մեռաւ և այլ ամենեքեան ապրեցան, այլ շատքն սաղկատել են։ Տ. Ցիշատ. Ման. 368.

Թ. 1791. «Դեկտեմբերի 27 մեծ և անագին չարժ եղև ի քաղաքն Թավրէզ, որ բոլոր քաղաք տապալեցաւ, և անթիւ մարդիկ մեռան, և ի ներքոյ հողին մնացին, որ ականատեսքն ասացին թէ անագին քաղաք իբրև բնական բլուր մի եղև, որ ամենևին քաղաքի նշմարանք ոչ երևէին. նաև չրջակայ դասարայք՝ Խոյ, Որմի, Դունալի, Սալմաստ. և ի քաղաքս մեր Վան ևս չարժեցաւ, և ողորմութեամբ Աստուծոյ ոչինչ վնաս եղև։ Տ. Ցիշատ. Ման. 398.

Ց. Դ. Այս հատուածները քաղել ենք հետևեալ աղբիւրներից.

Յովհան Մամիկոնեան, Պատմ. Տարօնոյ, Վենետ. 1832.

Մովսէս Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից, Մոսկով 1860.

Ստեփաննոս Օրբէլեան, Պատմ. տանն Սիսական, Մոսկով 1861.

Թովմա Արծրունի, Պատմ. տանն Արծրունեաց, Ս. Պետ. 1887.

Յովհաննէս կաթուղիկոսի պատմութիւն, Երուսաղէմ 1867.

Մատթէոս Ուռհայեցի, Պատմութիւն, Երուսաղէմ 1869.

Ստեփաննոս Ասողիկ, Պատմութիւն, Ս. Պետ. 1885.

Վարդան վարդ. Հաւաքմունք պատմ. Վենետ. 1862.

Կիրակոս Գանձակեցի, Համառ. Պատմ. Վենետ. 1865.

Սամուէլ Անեցի, Հաւաքմունք և այլն, Վաղարշ. 1893.

Նօտարք Հայոց, Ղևոնդ վ. Փիրզ. Կ. Պոլիս։

Մանանայ, Դ. վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս 1876.

Զաքարիա սարկաւագի պատմագր, Վաղարշ. 1870.

Մխիթար Այրիվանեցի, պատմ. Հայոց, Մոսկ. 1860 և այլն.



9(47-52)(03)
4-75

«ԼՈՒՄԸՆ»

Երիտասարդաց հանդիսության գրքերը

1. Իս. Յարութիւնեան. Ստեփաննոս Պալասանեան գ. 25 կ.
2. Պոտապէնկո. Մի կտոր հաց. թարգմ. Դ. ք. Աղանեանց գ. 10 կ.
3. Սենկիեվիչ. Դէպի Աֆրիկա. թ. Դ. ք. Աղանեանց գ. 15 կ.
4. Դասախօսութեան զօրութիւնը թարգմ. Ս. Մանդինեան գ. 30 կ.
5. Բակ. Կիլիկիա գ. 15 կ.
6. Ն. Տէր-Կարապետեան. Խաչատուր Աբովեան գ. 60 կ.
7. Անժամանակ թատրոն և ընթերցանութիւն. թարգմ. Ս. Մանդինեան գ. 25 կ.
8. Իս. Յարութիւնեան. Աշակերտի լուշատետրը գ. 30 կ.
9. Սա. Աւետիքեան. Ղեկավարներ գ. 40 կ.
10. Պեստալոցցի. Լինհարդ և Գերտրուդ. թարգմ. Իս. Յարութիւնեան գ. 1 ր. 50 կ.
11. Մելքիսեդեկ եպիս. Մուրատեան. Պետրոս Շանշեան. պատկերով. գ. 50. կ.
12. Իս. Յարութիւնեան. Զգացմունքների աշխարհ գ. 30 կ.
13. Յար. Թումանեան. Մելիք-Իսուփ. պատմ. պօէմա գ. 20 կ.
14. Մ. Եօկալի. Ուրացողը թ. Ի. Յարութիւնեանց գ. 20 կ.
15. 1901. ս. Էջմիածնի ԺԶ դարագարձը գ. 25 կ.
16. Ներ. Շահազիզ. Մկրտիչ Էմին. գ. 60 կ.
17. Դ. ա. ք. Աղանեանց. Հընից-Նորից. ա. տրակ. գ. 30 կ.
18. Կարալէնկո. Կոլր երաժիշտը. թարգմ. Մուշէ վարդապետ. գ. 60 կ.
19. Զորրորդ դարու հալ եկեղեցին գ. 25 կ.
20. Երուանդ Շահազիզ. Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը. գ. 40 կ.
21. Իս. Յարութիւնեան. Իմ օրագիրը. գ. 25 կ.
22. Մեծ Ներսէս. գ. 25 կ.
23. Դ. Խաչիկոնց. Հայոց կրօնական քանասաստեղծութիւն գ. 60 կ.
24. Իս. Յարութիւնեան. Ե. Սպիրի. կին վիպագիր. գ. 15. կ.
25. Ն. Աղանեան (թարգմ.) Սև հացեր. գ. 5 կ.
26. Օ. Շրայնէր. Մատուռի աւերակներում. թարգմ. Գիւտ. ա. ք. Աղանեանց գ. 5 կ.
27. Կարալէնկո. Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վարդ. գ. 40 կ.
28. Կ. Կոստանեան. Շարժի տարեգրութիւնն Հայոց մէջ. գ. 20 կ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.